**Արձանագրություն N 2**

***2023 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի (թմրամիջոցների) ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/5» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան

«07» «Սեպտեմբերի» 2022թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Վ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Ընդունել ի գիտություն, որ 29.07.22թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2022 թվականի օգոստոսի 9-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2022 թվականի օգոստոսի 10-ին ժամը 14:00-ին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Արֆարմացիա» ՓԲԸ | arpharm.armenia@yahoo.com | 02505735 |
| 2 | «Ջի Ջի Կոնցեռն» | gigiconcern@gmail.com | 01037495 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն «Ջի Ջի Կոնցեռն»-ի կողմից ներկայացված փաստաթղթերը լրացված են թերի և ոչ ճիշտ և ներկայացված չէ իրական շահառուների վերաբերյալ հայտարարությունը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, սակայն չգրանցված դեղերի մասով «Արֆարմացիա» ՓԲԸ-ին առաջարկվել է շտկել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը հավելված 1.1՝ մասնավորապես շտկել ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները և արտադրողների անվանումները, ինչպես նաև ներկայացնել չգրանցված դեղերի մասով Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը:

**Որոշվեց.** Գնահատումը հետաձգել մինչև ծանուցված մասնակցի կողմից սահմանված պատշաճ կարգով անհրաժեշտ տեղեկատվությունը (շտկված տեխնիկական բնութագրեր, տեղեկանքներ) էլեկտրոնային աճուրդ համակարգում ներկայացնելը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***4. Հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

12.08.2022թ. մասնակիցների հայտերի գնահատումը կասեցվել էր՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը թերի, ոչ ճիշտ ներկայացնելու և վերջիններս շտկելու նպատակով:

02.09.2022թ. ստացվել է պատասխան գրությունը Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ից, սակայն վերջինս հասանելի է եղել համակարգում 06.09.2022թ. դրությամբ՝ ծանուցված մասնակիցը համակարգում ներբեռնել էր պահանջվող շտկված տեխնիկական բնութագրերը և ներկայացրել էր գրություն (կցվում է) առ այն, որ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ 2-րդ չափաբաժնի «Օմնոպոն» դեղը արտադրվում է «ԽԴՁ «Զդորովյե նարոդու» ՍՊԸ, 61002, Խարկով, Կուլիկիվսկա փ. 41՝ «ԽԴՁ «Զդորովյե նարոդու» ՍՊԸ, 61013, Խարկով, Շևչենկո փ. 22 (Ուկրաինա) և "Մոսկվայի էնդոկրինային գործարան" ՖՊՈՒՁ, Նովոխոխլովսկայա փ. 25, շ 1, Մոսկվա, 109052-որակի և բաց թողնման հսկող, "Մոսկվայի էնդոկրինային գործարան" ՖՊՈՒՁ, Նովոխոխլովսկայա փ. 25, շ 2, Մոսկվա, 109052, Ռուսաստան-բալք արտադրող, փաթեթավորող՝ "Մոսկվայի էնդոկրինային գործարան" ՖՊՈՒՁ, 25, Նովոխոխլովսկայա փ., Մոսկվա, 109052 (Ռուսաստան) և գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում: Միաժամանակ հայտնել է, որ հաշվի առնելով Ուկրաինայում ստեղծված արտակարգ ռազմաքաղաքական իրավիճակը, Խարկով քաղաքում գտնվող ՝«ԽԴՁ «Զդորովյե

նարոդու» ընկերության կողմից արտադրվող Օմնոպոն-ՁՆ դեղամիջոցի մատակարարումը դարձել է անհնար, ուստի միակ տարբերակ կարող է համարվել Ռուսաստանում «Մոսկվայի էնդոկրինային գործարան» ՖՊՈՒՁ գործարանի կողմից արտադրվող Օմնոպոն դեղը: Ներկայացված հանգամանքներից ելնելով, պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է հարցում Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին «Օմնոպոն»՝ (Մորֆին (մորֆինի հիդրոքլորիդ), նոսկապին, պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ), կոդեին, թեբային լուծույթ ներարկման 11.5մգ/մլ+5.4մգ/մլ+0.72մգ/մլ+1.44մգ/մլ+0.1մգ/մլ) դեղի այլ երկրներում գրանցված լինելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար, որին ի պատասխան ստացվել է գրություն (կցվում է) առ այն, որ վերոնշյալ «Օմնոպոն»՝ (Մորֆին (մորֆինի հիդրոքլորիդ), նոսկապին, պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ), կոդեին, թեբային լուծույթ ներարկման 11.5մգ/մլ+5.4մգ/մլ+0.72մգ/մլ+1.44մգ/մլ+0.1մգ/մլ) դեղի նշված բաղադրությամբ ներարկման լուծույթը արտադրվում է «Մոսկվայի էնդոկրինային գործարան» ՖՊՈՒՁ դեղերի արտադրողը: Միաժամանակ ուռուցքով հիվանդների դեղապահովումը կազմակերպելու նպատակով, հաշվի առնելով ուռուցքով պացիենտների դեղապահովման անընդհատության կարևորությունը և հրատապությունը՝

**Որոշվեց.** «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով՝ շտկված տեխնիկական բնութագրով ներկայացված դեղերի մասով, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ ստորև ներկայացված տեխնիկական բնութագրով դեղի մասով.

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|---|
| | | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը |
| 2 | Օմնոպոն, պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ), կոդեին, մորֆին (մորֆինի հիդրոքլորիդ),նոսկապին, թեբային | «Մոսկվայի էնդոկրինային գործարան» ՖՏՈՒՁ | Օմնոպոն | «Մոսկվայի էնդոկրինային գործարան» ՖՏՈՒՁ |

**Որոշվեց.** Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել՝ «Ջի Ջի Կոնցեռն»-ի հայտը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**5. *Մասնակիցների առաջարկած գների մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

10.08.2022թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով (excel):

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**6. *Հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**7. *Ընթացակարգի ամփոփման մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/5» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հետ բոլոր 4 չափաբաժինների մասով, 33,145,125 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/5» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 09.09.2022թ.-ից մինչև 18.09.2022թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ -------------------- Վ. Հակոբյան

Անդամներ՝ -------------------- Մ. Հարությունյան

-------------------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ -------------------- Հ. Սարգսյան

2022 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք թմրադեղերի վերաբերյալ վերջնական գներով

| NN | Դեղի անվանումը | Քանակ | Նախահաշվային | | «Արֆարմացիա» ՓԲԸ | | | | | | | | | | «Ջի Ջի Կոնցեռն» | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Նախնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Նախնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | Միավորի գին | Գումար | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Մորֆին հ/ք 1.0 մորֆինի հիդրոքլորիդ | 36,000 | 241.00 | 8,676,000 | 7,230,000 | 1,446,000 | 8,676,000 | 200.83 | 241.00 | 7,230,000 | 1,446,000 | 8,676,000 | 200.83 | 241.00 | 10,000,000,000 | 0 | 10,000,000,000 | 277,777.78 | 277,777.78 | 10,000,000,000 | 0 | 10,000,000,000 | 277,777.78 | 277,777.78 |
| 2 | Օմնոպոն, պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ), կոդեին, մորֆին (մորֆինի հիդրոքլորիդ),նո սկապին, թեբային | 25,300 | 345.00 | 8,728,500 | 7,273,750 | 1,454,750 | 8,728,500 | 287.50 | 345.00 | 7,273,750 | 1,454,750 | 8,728,500 | 287.50 | 345.00 | 10,000,000,000 | 0 | 10,000,000,000 | 395,256.92 | 395,256.92 | 10,000,000,000 | 0 | 10,000,000,000 | 395,256.92 | 395,256.92 |
| 3 | թրիմեպերիդին | 1,875 | 475.00 | 890,625 | 742,187.5 | 148,437.5 | 890,625 | 395.83 | 475.00 | 742,188 | 148,438 | 890,625 | 395.83 | 475.00 | 10,000,000,000 | 0 | 10,000,000,000 | 5,333,333.33 | 5,333,333.33 | 10,000,000,000 | 0.0 | 10,000,000,000 | 5,333,333.33 | 5,333,333.33 |
| 4 | Մորֆին (մորֆինի սուլֆատ) 20մգ/մլ; 20մլ | 3,300 | 4,500.00 | 14,850,000 | 12,375,000 | 2,475,000.0 | 14,850,000 | 3,750.00 | 4,500.00 | 12,375,000 | 2,475,000 | 14,850,000 | 3,750.00 | 4,500.00 | 10,000,000,000 | 0 | 10,000,000,000 | 3,030,303.03 | 3,030,303.03 | 10,000,000,000 | 0.0 | 10,000,000,000 | 3,030,303.03 | 3,030,303.03 |

Արփարմացիա ՓԲԸ
Arpharmacia CJSC
SINCE 1928

0064, ք. Երևան, Րաֆֆու 111
Հեռ.060 75-99-99
E-mail: info@arpharm.am

0064, Yerevan, 111 Raffi str.
Tel. 060 75-99-99
E-mail: info@arpharm.am

02.09.2022 N 01/184

ՀՀ առողջապահության նախարարության
Կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/5» ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի հրավերի-հանձնաժողովին

**Ի գիտություն**

Հարգելի գործընկերներ,

Ձեր կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 2 չափաբաժնի տեխնիկական բնութագրին համապատասխանում են միայն ներքոհիշյալ արտադրողների դեղամիջոցները.

| | Անվանում | Արտադրող, Երկիր | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|
| 1 | Օմնոպոն | "Մոսկվայի էնդոկրինային գործարան" ՖՊՈՒՁ, Նովոխոխլովսկայա փ. 25, շ 1, Մոսկվա, 109052-որակի և բաց թողնման հսկող, "Մոսկվայի էնդոկրինային գործարան" ՖՊՈՒՁ, Նովոխոխլովսկայա փ. 25, շ 2, Մոսկվա, 109052, Ռուսաստան-բալք արտադրող, փաթեթավորող "Մոսկվայի էնդոկրինային գործարան" ՖՊՈՒՁ, 25, Նովոխոխլովսկայա փ., Մոսկվա, 109052 (Ռուսաստան)-ի համար | Մորֆին (մորֆինի հիդրոքլորիդ), նոսկապին, պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ), կոդեին, թեբային լուծույթ ներարկման 11.5մգ/մլ+5.4մգ/մլ+0.72մգ/մլ+1.44մգ/մլ+0,1մգ/մլ |
| 2 | Օմնոպոն-ՁՆ | «ՒԴՁ «Զդորովյե նարոդու» ՍՊԸ, 61002, Խարկով, Կուլիկիվսկա փ. 41՝ «ՒԴՁ «Զդորովյե նարոդու» ՍՊԸ, 61013, Խարկով, Շևչենկո փ. 22 (Ուկրաինա)-ի համար | Մորֆին (մորֆինի հիդրոքլորիդ), նոսկապին, պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ), կոդեին, թեբային լուծույթ ներարկման 11.5մգ/մլ+5.4մգ/մլ+0.72մգ/մլ+1.44մգ/մլ+0,1մգ/մլ |

Նաև տեղեկացնում ենք, որ վերոնշյալ դեղամիջոցները գրանցված չեն Հայաստանի Հանրապետությունում:

Հաշվի առնելով Ուկրաինայում ստեղծված արտակարգ ռազմաքաղաքական իրավիճակը, Խարկով քաղաքում գտնվող «ՒԴՁ «Զդորովյե նարոդու» ընկերության կողմից արտադրվող Օմնոպոն-ՁՆ դեղամիջոցի մատակարարումը դարձել է անհնար:

Ամփոփելով վերոնշյալ հանգամանքները, ընտրության միակ տարբերակ կարող է համարվել Ռուսաստանում «Մոսկվայի էնդոկրինային գործարան» ՖՊՈՒՁ գործարանի կողմից արտադրվող Օմնոպոն դեղամիջոցը:

Հարգանքներով՝
«Արփարմացիա» ՓԲԸ տնօրեն Աննա Հովհաննիսյան

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
«НАУЧНЫЙ ЦЕНТР ЭКСПЕРТИЗЫ ЛЕКАРСТВ И МЕДИЦИНСКИХ ТЕХНОЛОГИЙ ИМЕНИ АКАДЕМИКА ЭМИЛЯ ГАБРИЕЛЯНА» АОЗТ
«SCIENTIFIC CENTRE OF DRUG AND MEDICAL TECHNOLOGY EXPERTISE AFTER ACADEMICIAN EMIL GABRIELYAN» CJSC

Կոմիտաս պող. 49/5, Երևան 0051, Հայաստան
пр. Комитаса 49/5, Ереван 0051, Армения
49/5 Komitas aven., Yerevan 0051, Armenia

Tel.: (+374 60) 83-00-73, (+374 10) 23-16-82, 23-08-96
E-mail: admin@pharm.am
Web: www.pharm.am

0114113222

07.09.2022

ՀՀ առողջապահության նախարարության

գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանին

Հարգելի տիկին Գրիգորյան,

Օմնոպոն դեղի վերաբերյալ Ձեր հարցման կապակցությամբ տեղեկացնում եմ, որ մորֆին հիդրոքլորիդ 11.5մգ/մլ, նոսկապին 5.4մգ/մլ, պապավերինի հիդրոքլորիդ 0.72մգ/մլ, կոդեին 1.44մգ/մլ, թեբային 0.1մգ/մլ բաղադրությամբ, սակայն ենթամաշկային ներարկման լուծույթ դեղաձևով և «Օմնոպոն» անվանմամբ դեղ արտադրում է «Մոսկվայի էնդոկրին գործարանը»:

Հարկ է նշել, որ ներկա պահին համացանցային հասանելի աղբյուրներում նույն բաղադրությամբ այլ դեղեր չեն գտնվել;

Հարգանքով՝

Տնօրեն Արայիկ Բաղրյան